

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

| | |
|--|-----|
| ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... | 2 |
| ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ..... | 3 |
| ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ..... | 4 |
| 1.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ | 5 |
| 2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ..... | 12 |
| 3.ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ | 39 |
| 4.ՍԱՀՄԱՆՎԱԾ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ..... | 39 |
| 5.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ..... | 54 |
| 6.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶՓԱՆԻՇՆԵՐԸ | 76 |
| 7.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ..... | 82 |
| 8.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԻՋՈՑՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ | 85 |
| 9.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԸ | 110 |

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հաստատության զարգացման ծրագիրը մշակված է պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափի պահանջներին համապատասխան

(ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2022 թվականի սեպտեմբերի 22-ի N 35-Ն հրաման)

Սույն հաստատության զարգացման ծրագրում ներկայացված են պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հավակնորդի զարգացման ծրագրի գնահատման չափանիշներով սահմանված բոլոր բնութագրիչները

(ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2023 թվականի ապրիլի 18-ի N 399-Ա հրաման)

Դպրոցի զարգացման ծրագիրը երկարաժամկետ կարգավորող փաստաթուղթ է, որը բնութագրում է կրթության, զարգացման խնդիրների ու ուղղությունների հիմնական միտումներն ու նպատակները, մանկավարժական գործընթացի կադրային և մեթոդական աջակցության կազմակերպման առանձնահատկությունները և կրթական համակարգի նորարարական վերափոխումները, հիմնական պլանավորված վերջնական արդյունքներն ու չափանիշները:

Ծրագիրը մշակելիս իրականացվել են հանդիպումներ և ներկայացուցչական հարցումներ աշակերտների, ծնողների և մանկավարժների շրջանում, որի արդյունքները ներառվել են ռազմավարության տարբեր հատվածներում: Սույն դպրոցի զարգացման ծրագիրը մշակելու համար կատարվել է հետևյալ հաջորդական քայլերը.

- Ծրագրային նպատակները, խնդիրները և միջոցառումները սահմանելուց հետո կատարվել է գործունեության պլանավորում • Վերլուծվել է առկա իրավիճակը, նշվել է ուժեղ և թույլ կողմերը, բացահայտվել եղած հիմնախնդիրները
- Սահմանվել է զարգացման հիմնական նպատակներն ու դրանցից բխող խնդիրները
- Սահմանվել է դպրոցի զարգացման գերակայությունները, մշակվել է կատարման համար անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական միջոցները
- Ձևակերպվել է ծրագրի ակնկալվող արդյունքները;

Մշակման ընթացքում խորհրդատվական հանդիպումներ են տեղի ունեցել կառավարման խորհրդի անդամների, աշակերտների, ոլորտը ներկայացնող մասնագետների, համայնքի այլ դերակատարների հետ՝ բացահայտելու լրացուցիչ կարիքները և կրթական ժամանակակից միտումները: Ծրագրի մշակմանը նախորդող ամիսների ընթացքում կազմակերպվել են կարիքների բացահայտման հանդիպումներ և քննարկումներ, վեր են հանվել որակի կառավարմանը, մեթոդական գործիքակազմին, գնահատման և մշտադիտարկման մեխանիզմներին, ռիսկերի արդյունավետ գնահատմանը առնչվող խնդիրներ: Առաջարկվել են հիմնավոր լուծումներ և գործողություններ:

ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

Սույն զարգացման ծրագրում ներկայացվող « Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի առաքելությունը միտված է կատարելու «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի պահանջները՝ հիմք ընդունելով հանրակրթության բնագավառում պետական քաղաքականությունը. Ջարգացնել ազգային դպրոց , որը համընդհանուր ներառական կրթության իրականացմամբ, սեփական գործունեությամբ կկազմակերպի համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորում:



ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Դպրոցի տեսլականը ուրվագծում է ապագա ցանկալի վիճակը:

Սույն զարգացման ծրագրում ներկայացվող «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեսլականն է լինել առաջատար հաստատություն, որը խթանում է գերազանցության, նորարարության և անձնական աճի մշակույթը: Դպրոցը նախագծում է ստեղծել ներառական և դինամիկ ուսումնական համայնք, որտեղ սովորողները կզարգանան մտավոր ակադեմիական, ստեղծագործական և սոցիալական ուղղություններով:

«Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տեսլականը միտված է զարգացնել հանրակրթական ուսումնական հաստատությունը, հանրակրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներին համապատասխան հետևյալ ուղղություններով.

- Բարելավել «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեության որակի շարունակական բարելավումը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:
- Ապահովել հանրակրթության հավասար հնարավորություններ, մատչելիություն, շարունակականություն, հաջորդականություն «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստվածության աստիճանին համապատասխան:
- Կառավարել «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հանրակրթության բնագավառում՝ ժողովրդավարական կառավարման սկզբունքների պահանջներին համապատասխան:
- Աստիճանական դինամիկ աճով հավասարակշռել «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ինքնավարությունը և պետական վերահսկողությունը:

- Ապահովել «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում սովորողների ու աշխատողների իրավահավասարությունը:
- Նպաստել «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում մարդկային արժանապատվության պահպանմանը, յուրաքանչյուր սովորողի՝ մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը:
- Նպաստել «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի յուրաքանչյուր սովորողի՝ իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը, ինքնասպասարկման ունակությունների ձեռքբերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը, մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը:
- Օժանդակել յուրաքանչյուր սովորողի որպես ապագա քաղաքացու ձևավորմանը:

1.ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Կրթական կարիքների նկարագրությունը

«Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործունեությունը սահմանված է ՀՀ արդարադատության նախարարության պետական ռեգիստրում (գրանցման համար՝ 90.210.00377) «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կանոնադրությամբ:

Հիմք ընդունելով «Կրթության մասին» ՀՀ օրենքի հոդված 18-ի պահանջները կարելի է արձանագրել, հաստատության նպատակն է սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական որակների համակողմանի և ներդաշնակ զարգացումն, անձի՝ որպես ապագա քաղաքացու ձևավորումը, մասնագիտական կողմնորոշումը, նրանց ինքնուրույն կյանքի և մասնագիտական կրթության նախապատրաստումը:

«Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կրթական կարիքների գնահատումն իրականացվել է հետևյալ բաղադրիչներով՝ հիմք ընդունելով «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի վերջին հինգ տարիների ներքին գնահատման, ՀՀ Կրթության տեսչական մարմնի ստուգատեսների

հաշվետվությունները և արտաքին գնահատման արդյունքները:

Դպրոցի կրթական կարիքների գնահատումը ներառում է ստորև ներկայացվող հիմնական ուղղությունները, որոնք նպաստում են կրթության արդյունավետ մատուցմանը և սովորողների համակողմանի զարգացմանը.

- **Ուսումնական ծրագրերի որակական գնահատում.** Լավ մշակված և համապարփակ ուսումնական ծրագրերը, որոնք համապատասխանում են կրթական չափորոշիչներին և բավարարում են սովորողների ուսուցման բազմազան կարիքները:
- **Ուսուցման գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում.** Արհեստավարժ ուսուցիչների ներգրավվածությամբ՝ արդյունավետ ուսուցման ռազմավարությունների կիրառում, ովքեր տրամադրում են սովորողներին տարբերակված աջակցություն անհատական ուսումնական նպատակներին հասնելու համար:
- **Ռեսուրսների գնահատում այդ թվում նաև մարդկային.** Արդիական, նպատակային ռեսուրսների օգտագործման գնահատում՝ մանկավարժական և վարչական աշխատողների պաշտոնային պարտականությունների կատարման գործընթացում:
- **Ենթակառուցվածքների գնահատում.** Համապատասխան ֆիզիկական ենթակառուցվածքների, ներառյալ դասարաններ, գրադարաններ, համակարգչային լաբորատորիաներ և այլ հարմարությունների առկայություն և կիրառականություն՝ նպաստավոր ուսումնական ֆիզիկական միջավայր ստեղծելու համար:
- **Տեխնոլոգիաների ինտեգրման գնահատում.** համապատասխան ռազմավարությունների կիրառում տեխնոլոգիական գործիքների և ռեսուրսների հասանելիություն, որոնք նպաստում են թվային գրագիտության, մեդիագրագիտության զարգացմանը, ընդլայնում են ուսումնադաստիարակչական գործընթացի կազմակերպման փորձառությունը և խթանում արդիական պահանջարկային կրթության կազմակերպմանը
- **Հանրակրթական պետական ծրագրերի իրականացման գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում և հետադարձ կապ.** Գործընթացի կազմակերպման շարունակական գնահատման արդյունավետ համակարգերի ներդրում՝ սովորողների ուսուցման, ուսումնառության առաջադիմությունը գնահատելու, հետադարձ կապ ապահովելու, ուսումնական պրակտիկաների և ուսումնական ծրագրերի բարելավման համար:
- **Համայնքի ներգրավվածության գնահատում.** համագործակցություն սովորողների ծնողների, համայնքային կազմակերպությունների և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ աջակցելու և հարստացնելու սովորողների կրթության կազմակերպման գործընթացը:
- **Գործընթացի կազմակերպման ներառականության և բազմատեսանկյուն մոտեցումների կիրառման գնահատում.** գործընթացները կազմակերպելով, խթանելով բազմատեսանկյուն մոտեցումների կիրառումը և համընդհանուր ներառականությունը, հաստատությունը արժևորում, հարգում և գնահատում է բոլորի անհատական իրավունքները, ծագումը, մշակույթը, կարողունակությունները ու անձի այլ առանձնահատկությունները:
- **Շարունակական մասնագիտական զարգացման գնահատում.** հաստատության աշխատողների համար հնարավորություններ ներգրավվելու շարունակական մասնագիտական զարգացման մեջ՝ բարձրացնելու իրենց կարողունակությունները, արդիականացնելու լավագույն, առաջավոր փորձը և խթանելու շարունակական կատարելագործման մշակույթը: Յուրաքանչյուր դպրոց ստանձնելով անհատի ձևավորման և զարգացման ամենապատասխանատու աշխատանքը, տվյալ համայնքում

շահառուների՝ սովորողների նրանց ծնողների կրթադաստիարակչական կարիքների բավարարման գործընթացում հանրակրթական ծրագրերի իրականացմամբ լուծում է հետևյալ խնդիրները՝

- ❖ Սովորողների կողմից բնության, հասարակության, տեխնիկայի, արտադրության և բնապահպանության մասին հիմնարար գիտելիքների յուրացումը, շարունակական կրթության համակարգում նրանց ինքնակրթության և ինքնազարգացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:
- ❖ Համամարդկային և ազգային արժեքներին հաղորդակից, ազգային մշակութային ու բարոյահոգեբանական ժառանգությունը կրող և գործուն քաղաքացիական դիրքորոշում ունեցող անհատ և քաղաքացու ձևավորում:
- ❖ Սովորողների ռազմահայրենասիրական դաստիարակության և նախնական զինպատրաստության համալիր ծրագրի իրականացում:

Ելնելով վերոգրյալից նշենք, հաստատության կողմից շահառուների կրթական կարիքների բավարարման նպատակով իրականացվող պետական ծրագրերի կազմակերպման գործընթացի բաղադրիչները առանձին ուղղություններով:

Ուսումնական հաստատության կառավարում.

1. Դպրոցը տվյալ համայնքի կրթադաստիարակչական ակտիվ կենտրոն դարձնելու նպատակով, հաստատության ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան և դպրոցի զարգացման ծրագրի տեսլականով:
2. Դպրոցում կազմակերպվող աշխատանքներն առավել մրցունակ, նպատակային և հասցեական դարձնելու նպատակով համագործակցությունների այդ թվում միջազգային կառավարում, ղեկավարում և առաջնորդում:
3. Դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նպատակով, հաստատության ռեսուրսների ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում:
4. Դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նպատակով, հաստատությունում գործող խորհրդակցական մարմինների, կազմակերպվող աշխատանքների վերահսկողության ու հաշվետվողականության ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում:
5. Դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նպատակով, մարդկային ռեսուրսների ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում
6. Դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նպատակով, տեխնոլոգիաների ռազմավարական ինտեգրում և կառավարում
7. Դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի նպատակով, համայնքի և այլ շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ընդլայնում, ռազմավարական կառավարում և առաջնորդում
8. Դպրոցում կրթադաստիարակչական ծառայությունների մատուցման որակական աճի և անձի իրավունքների պաշտպանության նպատակով, մշակութային բազմազանության և ներառականության խթանում, ռազմավարական կառավարում և առաջնորդում:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների կազմակերպում

1. Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելու նպատակով, հանրակրթական պետական ծրագրերի իրականացում, դաս-դասարանային մոտեցումով նպատակային արդիական մանկավարժական ռազմավարություններով
2. Հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին համապատասխան սովորողի ուսուցումն ու դաստիարակությունը կազմակերպելու նպատակով արտադպրոցական աշխատանքների կազմակերպում նպատակային արդիական մանկավարժական ռազմավարություններով
3. Յուրաքանչյուր սովորողի համար անկախ կրթության առանձնահատուկ պայմանների կարիքներից, ազգությունից, մշակութային բազմազանությունից և այլ առանձնահատկություններից կրթության հավասար իրավունքով համընդհանուր ներառական կրթության կազմակերպում, նպատակային արդիական մանկավարժական ռազմավարություններով
4. Արդիական կրթական ծրագրերի ներդրում, որոնք համապատասխանում են հանրակրթության պետական չափորոշչի պահանջներին և նպաստում են սովորողների հիմնական կարողունակությունների ձեռքբերմանը:
5. Սովորողակենտրոն դասավանդման տարբերակված ռազմավարությունների իրականացում նպատակային և հասցեական յուրաքանչյուր սովորողի համար:
6. Սովորողների ուսուցման և ուսումնառության գնահատման ռազմավարական համակարգերի ներդրում և կառավարում, որոնք հնարավորություն կտան գնահատել կատարված աշխատանքի արդյունավետությունը և յուրաքանչյուր սովորողի կրթադաստիարակչական առաջընթացը:

Վարչատնտեսական գործունեություն

1. Հաստատության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով հաստատության վարչատնտեսական աշխատանքների կազմակերպման համալիր ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում:
2. Ուսումնական ֆիզիկական միջավայրի լիարժեք կիրառականությունն ապահովվելու նպատակով ենթակառուցվածքների համալրում, բարեկարգում և արդիականացում:
3. Ուսումնական ֆիզիկական միջավայրի լիարժեք կիրառականությունն ապահովվելու նպատակով որակյալ ուսումնական նյութերի համալրում, լրամշակում և արդիականացում:
4. Հաստատության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով աշխատողների աշխատանքի գնահատման և խրախուսման ռազմավարական համակարգերի ներդրում և կառավարում:

5. Ֆինանսական ռեսուրսների արդյունավետ նպատակային կառավարում:
6. Այլընտրանքային ֆինանսական ռեսուրսների ներգրավման գործընթացի ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում:
7. Հաստատությունում անվտանգ աշխատանքի կազմակերպման ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում:
8. Հաստատության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով ռեսուրսների ռազմավարական կառավարում, ղեկավարում և առաջնորդում:
9. Հաստատության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով հաստատության վարչատնտեսական աշխատանքների կազմակերպման գործընթացում թվային տեխնոլոգիաների ներդրում:

1.2. Համապատասխանությունը պետության կրթական քաղաքականության միտումներին համայնքի, շահառու խմբերի կարիքներին ու հնարավորություններին

« Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը գտնվում է Լոռու մարզի Սպիտակ համայնք, բնակավայր Մեծ Պարնի 1-ին փողոց 76շենք , որտեղ երեխաների կրթությունն ու դաստիարակությունը հիմնականում կազմակերպվում է պետության կրթական քաղաքականության միտումներին համապատասխան :

Դպրոցում արգելվում են կրոնական քարոզչություն և քաղաքական գործունեություն: Յուրաքանչյուր սովորողի համար կազմակերպվող կրթությունը հիմնականում նպատակաուղղված է նրա.


- մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացմանը
- մարդկային արժանապատվության պահպանմանը
- իր ընդունակություններին, կարողություններին և առողջությանը համապատասխան ուսումնական միջավայրում նրա հասարակական հարմարեցմանը
- ինքնասպասարկման ունակությունների ձեռք բերմանը և ինքնուրույն կյանքի նախապատրաստմանը
- մասնագիտական կողմնորոշմանը և մասնագիտական աշխատանքային գործունեության նախապատրաստմանը
- որպես ապագա քաղաքացու ձևավորմանը

Ուսումնասիրելով դպրոցի կողմից տրված փաստաթղթերի և այլ ռեսուրսների բովանդակությունը (ներքին գնահատման հաշվետվություն, հաստատության պաշտոնական կայք) և հաշվի առնելով դպրոցի մանկավարժական, ծնողական, աշակերտական խորհուրդների հետ հանդիպման արդյունքում կատարված առաջարկները կարելի է արձանագրել, որ վերջին հինգ տարիների ընթացքում դպրոցում հանրակրթական պետական ծրագրերի իրականացումը կազմակերպվել է համընդհանուր մոտեցումներով առանց գնահատելու համայնքի ու շահառու խմբերի կարիքները, հնարավորությունները, արձանագրված չեն նաև

համագործակցություններ՝ նպատակային արդյունավետության մոտեցումներով:

1.3. Համապատասխանությունը հաստատության ենթակառուցվածքների հնարավորություններին, մարդկային ռեսուրսներին և ներուժին.


2018-2023 թվականների տրված տվյալներով «Մեծ Պարնու ակ. Միեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում սովորողների շարժի թիվը էապես չի փոփոխվել(գծապատկեր 1):



Գծապատկեր 1

Հաստատության մարդկային ռեսուրսներ. Տվյալներ ուսուցիչների տարիքային բաշխվածության վերաբերյալ

Ստորև ներկայացվում են հաստատության մարդկային ռեսուրսների հնարավորությունները հավելվածների միջոցով, որոնք գնահատվել են 2022-2023 ուսումնական տարվա հաստատության ներքին գնահատման հանձնաժողովի կողմից և տվյալները արձանագրվել ու հրապարակվել են « Մեծ Պարնու ակ. Միեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի 2022-2023 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվության մեջ:



Հաստատության մարդկային ռեսուրսներ. Տվյալներ ուսուցիչների պաշտոնների վերաբերյալ

Աղյուսակ 3

| Հ/Հ | Սպասարկող անձնակազմ | Պաշտոն |
|-----|---------------------|--|
| 1 | Սոնա Բարսեղյան | Գրադարանավար |
| 2 | Սարգիս Փիլոյան | Արմաթ լաբորատորիայի խմբակավար |
| 3 | Տիրուն Մելքոնյան | Էլեկտրոնային կառավարման և դասավանդման ապահովման մասնագետ |
| 4 | Մհեր Ապիկյան | Քաղ.պաշտ. շտաբի պետ, զինղեկ |
| 5 | Լիլիթ Հովակիմյան | Գործավար |
| | Հռիփսիմե Գրիգորյան | Ուսուցչի օգնական |
| 6 | Ադասի Մազմանյան | Պահակ |

| | | |
|----|------------------|-----------|
| 7 | Այբերտ Պապոյան | Պահակ |
| 8 | Անի Աշուղաթոյան | Հավաքարար |
| 9 | Սոֆիյա Աղազարյան | Հավաքարար |
| 10 | Սոֆիկ Գասոյան | Հավաքարար |

Հաստատության մարդկային ռեսուրսներ. Տվյալներ հաստատության ղեկավար և վարչական կազմի վերաբերյալ

Աղյուսակ 4

| | | |
|-----|-----------------------|--|
| Հ/հ | Անուն ազգանուն, | Պաշտոն |
| 1 | Սարգիս Փիլոյան | Տնօրեն |
| 2 | Լիլիթ Ահարոնյան | Տնօրենի տեղակալ |
| 3 | Հրաչ Փիլոյան | Սովորողների հետ դաստիարակչական աշխատանքների համակարգող |
| 4 | Մանասար Հարությունյան | Հաշվապահ |

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

2.1. Ուսումնական հաստատության շենքային պայմանների վերլուծությունը

Դպրոցական շենքի պայմանները, ուժեղ և թույլ կողմերը վերլուծելը շատ կարևոր են բարելավում պահանջող ոլորտները բացահայտելու և առկա ակտիվները օգտագործելու համար: Դպրոցի շենքային պայմանների վերլուծության շրջանակը ներկայցվում է ստորև:

Ստորև ներկայացված են «Մեծ Պարնու ակ. Միեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր.

- Հաստատության շենքը կայուն է վտանգների ազդեցությանը՝ երկրաշարժեր, հրդեհներ և այլն
- Հաստատության շենքի շահագործումը համապատասխանում է շահագործման անվտանգության նորմերին
- Շենքում առկա են դեպի դուրս բացվող պահուստային ելքեր
- Շենքի աստիճանների լայնությունը և դռների բացվածքը համապատասխանում է պահանջվող նորմատիվներին, դրանք հարմարեցված են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների պահանջներին
- Շենքը հարմարեցված է ԿԱՊԿՈՒ սովորողների անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին՝ թեք հարթակներ, լայն դռներ
- Առկա է Արմաթ ինժեներական լաբորատորիա , գրադարան , ճաշարան/աղյուսակ 5/
- Հաստատությունում առկա է քաղաքացիական պաշտպանվածության պլան և ուսումնական տարվա ընթացքում իրականացվում են պլանի գործարկում և վարժանքներ, վարվում է գրանցամատյան
- Հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման անվտանգ համակարգով
- Հաստատության բոլոր դասասենյակներում ջեռուցման ամիսներին ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին
- Հաստատության միջանցքները ջեռուցվում են և միջանցքներում ջերմաստիճանը համապատասխանում է սանիտարահիգիենիկ նորմերին
- Հաստատությունն ապահովված է շուրջօրյա հոսող խմելու ջրով
- Հաստատության բոլոր հարկերում առկա են առանձնացված, վերանորոգված սանհանգույցներ տղաների և աղջիկների համար:
- Հաստատության բոլոր սանհանգույցներն ապահովված են շուրջօրյա հոսող ջրով և ապահովված են հիգիենայի պարագաներով՝ օձառով, թղթով:
- Հաստատությունում մշակված և առկա է սովորողների և անձնակազմի տարհանման պլան:
- Հաստատության նախասրահում, բոլոր հարկերում, դասասենյակներում փակցված են տարհանման պլան-սխեմաները՝ համապատասխան գունային ցուցալաքներով:

Թույլ կողմերը

- Հաստատության շենքը կարիք ունի վերանորոգման
- Դպրոցի տանիքը ամբողջությամբ ենթակա է փոխարինման:
- Դպրոցի 3 մասնաշենքերի միջանցքները, ինչպես նաև դասասենյակները ենթակա են վերանորոգման:
- Ժամանակակից գույքի և սարքավորումների բացակայություն:
- Դասասենյակների բոլոր դռները ենթակա են փոխարինման
- Սպորտային և հանդիսությունների դահլիճների բացակայություն
- Ուսումնական լաբորատորիաների, հանդիսությունների և սպորտ դահլիճների բացակայություն
- Հաշմանդամություն ունեցող անձանց համար չկա հարմարեցված սանհանգույց:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԾԱՇՎՐԱՆԻ ՆՅՈՒԹԱՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Հաստատության ճաշարանը գտնվում է դպրոցի շենքի ներսում: 2018թ. ճաշարանը հիմնանորոգվել է բարերարների միջոցով, իսկ 2022թ-ին վերանորոգվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի տրամադրած միջոցներով, ինչպես նաև հաստատության խնայողությունների հաշվին: Ճաշարանի նախասրահում տեղադրվել են լվացարաններ: Առկա է շուրջօրյա տաք և սառը ջրամատակարարում, առկա է ջրատաքացման բաք, անհատական կոյուղացման համակարգ: Ճաշարանը հագեցած է համապատասխան գույքով և տեխնիկայով, սակայն տարրական դասարանների աշակերտների թվի աճով պայմանավորված հնարավոր է սեղան-աթոռները չբավարարեն: Առանձնացված է խոհանոցային հատվածը: Ճաշարանի գույքը ձեռք է բերվել դպրոցի խնայողությունների հաշվին, իսկ տեխնիկական տրամադրվել է ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագրի «Կայուն դպրոցական սնունդ» ծրագրի կողմից: 1-4-րդ դասարանցիները, ինչպես նաև նախակրթարանը ստանում են կայուն առողջ դպրոցական տաք սնունդ, պատշաճ ձևով կազմակերպվում է աշակերտների սննդի հարցը: Ճաշարանի, խոհանոցի և նախասրահի ամբողջ տարածքը ամենօրյա ռեժիմով ախտահանվում է: Սանիտարահիգիենիկ պայմանները մշտադիտարկման բարձր մակարդակի վրա են գտնվում /ստուգումներ, խոտանման, ախտահանման, պահեստի մատյաններ/:

| Հ/Հ | Անվանումը | Ձեռքբերումը |
|-----|--|-----------------------------------|
| | Էլեկտրական վառարան, 4 այրիչով, ջեռոցով | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |
| | Չժանգոտող մետաղից սեղան 1200*600 | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |
| | Կոնվենցիոն վառարան | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |
| | Չժանգոտվող մետաղից դարակաշար 900*500 | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |
| | Էլեկտրական ջրատաքացուցիչ բաթ | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |
| | Չժանգոտող մետաղից երկտեղանի լվացարան 530*530 | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |
| | Կենցաղային կշեռք | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |
| | Էլեկտրական ջեռոց | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |
| | Էլեկտրական հարիչ | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |
| | Սառնարան | ՄԱԿ-ի Պարենի համաշխարհային ծրագիր |

2.2. Դպրոցի նյութատեխնիկական բազան նրա ուժեղ և թույլ կողմերը

Դպրոցի նյութատեխնիկական բազայի վերլուծությունը էական նշանակություն ունի նրա ռեսուրսները գնահատելու, ինչպես նաև ուժեղ և թույլ կողմերը ավելի լավ բացահայտելու համար:

Ուժեղ կողմերը

- Առկա են դասագրքեր
- Առկա են համակարգիչներ, պրոյեկտոր, համացանցի հասանելիություն, Արմաթ ինժեներական լաբորատորիա
- Առկա է գրադարան, որը հազեցած է որոշակի քանակի գրքերով
- Հաստատության ֆինանսական հոսքերն իրականացվում են ամենամսյա, պետական բյուջեից
- Հաստատության ֆինանսական ռեսուրսներն օգտագործվում են արդյունավետ և նպատակային

Թույլ կողմերը

- Ինտերակտիվ գրատախտակների, ժամանակակից համակարգիչների բացակայություն

- Ուսումնական լաբորատորիաների բացակայություն
- Հանդիսությունների և սպորտ դահլիճների բացակայություն
- Ուսուցման կառավարման համակարգերի բացակայություն
- Այլ աղբյուրներից ֆինանսական ռեսուրսների համալրման բացակայություն

2.3. Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության վերլուծությունը

Դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների (մանկավարժական խորհրդի, մեթոդմիավորման, ծնողական խորհրդի և աշակերտական խորհրդի) գործունեությունը վերլուծելու համար գնահատենք նրանց ուժեղ և թույլ կողմերը.

Հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը կազմակերպվում է ՀՀ հանրակրթության բնագավառի օրենսդրության պահանջներին համապատասխան, որը հիմնականում ներկայացված է հաստատության կանոնադրության մեջ: Հաստատության կառավարման գործընթացը կազմակերպվում է կրթության պետական կառավարման լիազորված մարմնի, հաստատության տնօրենի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի, մեթոդական միավորումների (որոնք առայժմ 2-ն են) և աշակերտական խորհրդի կողմից :

Հաստատության կոլեգիալ կառավարման մարմինը աշխատանքը հիմնականում կազմակերպում է նիստերի գումարման միջոցով: Նիստերն արձանագրվում են: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 2 տարիների ընթացքում, կարելի է նշել, որ խորհուրդը միջին հաշվարկով գումարում է տարեկան 3 նիստ: Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է անխռով համագործակցային փոխըմբռնման գործելառճով: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Խորհրդի աշխատանքները կազմակերպում է խորհրդի նախագահը, խորհրդի մնացած անդամների և հաստատության տնօրենի աջակցությամբ: Գումարված նիստերն արձանագրվում են, կառավարման խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Աջակցել է ուսումնական հաստատության զարգացման ծրագրի կատարմանը, վերահսկել է զարգացման ծրագրի ժամանակացույցով սահմանված տարեկան գործողությունների իրականացումը, լսել է զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվությունը և տվել եզրակացություն

- Հաստատել է նախարարի 2013 թվականի ապրիլի 15-ի N 396-Ն հրամանով հաստատված՝ ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգի հիման վրա տնօրենի կողմից մշակված՝ դպրոցի ուսուցչի թափուր տեղի համար անցկացվելիք մրցույթի կարգը
- Քննարկել է ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները
- Քննարկել է ներքին գնահատման արդյունքները
- Հաստատել է իր աշխատակարգը, նիստերի օրակարգը, ժամանակացույցը և ընտրել խորհրդի նախագահ և քարտուղար

Աղյուսակ 6

Տվյալներ հաստատության կառավարման խորհրդի կազմի վերաբերյալ

| Անուն, ազգանուն | Աշխատանքի վայրը, պաշտոնը | Կրթություն |
|---------------------|---|-------------|
| Աշոտ Ամիրբեկյան | Կաթնաջուրի մ/դ, նախագահ | բարձրագույն |
| Ավագյան Մանվել | Կաթնաջուրի մ/դ | բարձրագույն |
| Պապոյան Մանվել | Մարզպետարանի ներկայացուցիչ | բարձրագույն |
| Մագոյան Սվետլանա | Չի աշխատում, մարզպետարանի ներկայացուցիչ | մ/մ |
| Մելիքյան Անուշ | Չի աշխատում ծնողխորհրդի անդամ | մ/մ |
| Ռեքոյան Լուսինե | Չի աշխատում, ծնողխորհրդի անդամ | |
| Ահարոնյան Լիլիթ | Մեծ Պարնու մ/դ, քարտուղար | Բարձրագույն |
| Մկոյան Լաուրա | Մեծ Պարնու մ/դ | բարձրագույն |
| Փահլևանյան Մարիամ | Մեծ Պարնու մանկապարտեզ | Բարձրագույն |
| Ջոթյան Անդրանիկ | Համայնքի ներկայացուցիչ | միջնակարգ |
| Արզումանյան Հայկուշ | Պարի ուսուցիչ | բարձրագույն |
| Ոսկանյան Հերմինե | դաստիարակ | մ/մ |
| Ավետիսյան Կարեն | Մարզպետարանի | բարձրագույն |

| | | |
|--------------|--------------------------------|-------------|
| | ներկայացուցիչ | |
| Նիստի Արախիկ | Մարգարետարանի ներկայացուցիչ | բարձրագույն |

Մանկավարժական խորհրդի աշխատանքները ևս կազմակերպվում են նիստերի գումարման միջոցով: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում՝ կարելի է նշել, որ խորհուրդը միջին հաշվարկով գումարում է տարեկան 10 նիստ : Խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է անխռով համագործակցային գործելաճով: Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով աշխատողի պաշտոնային պարտականությունները և աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքի ուղղությունները: Խորհրդի աշխատանքները կազմակերպում է խորհրդի նախագահը, ով ի պաշտոնե հաստատության տնօրենն է : Գումարված նիստերն արձանագրվում են մանկավարժական խորհրդի քարտուղարի կողմից: Հաստատության մանկավարժական խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Մանկավարժական խորհուրդը կազմավորվում է մանկավարժական համակազմի օգոստոսյան առաջին նիստում, ձևավորվում է տնօրենի հրամանով՝ մեկ ուսումնական տարի ժամկետով
- Դպրոցի բոլոր մանկավարժական աշխատողները մանկավարժական խորհրդի անդամ են
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է հանրակրթության պետական չափորոշչի պահանջների համաձայն՝ հանրակրթական հիմնական ծրագրերի իրագործման հարցերը՝ սովորողների նախասիրություններին ու ընդունակություններին համապատասխան, ապահովելով նրանց կյանքի և առողջության պահպանումը
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է սովորողի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի գնահատման համար մանկավարժահոգեբանական աջակցության տարածքային կենտրոն դիմելու հարցը՝ ծնողի դիմումի համաձայն
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը և սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունները
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է ուսուցման բովանդակության, սովորողների ուսումնառության որակի, նրանց հետ իրականացվող արտադասարանական աշխատանքների կազմակերպման հարցերը:
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է ուսումնական հաստատության ուսումնական պլանի նախագիծը
- Մանկավարժական խորհուրդը քննարկել է ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլանի նախագիծը և

հաշվետվությունը

- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել դպրոցի աշխատանքային ռեժիմը և աշխատանքային շաբաթվա տևողությունը սահմանելու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել սովորողներին դասարանից դասարան փոխադրելու, ամառային առաջադրանքներ տալու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել սովորողներին քննություններին թույլատրելու, գովասանագրով պարգևատրելու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել բացակայությունների պատճառով նախատեսված քննական առարկաների որոշման և քննությունների անցկացման ժամանակացույցի մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել սովորողներին վերաքննություններ նշանակելու կամ տվյալ ուսումնական տարվա դասընթացը կրկնելու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել դպրոցի շրջանավարտներին հիմնական կրթական մակարդակի պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել օրենքով սահմանված կարգով սովորողի նկատմամբ կարգապահական տույժ կամ խրախուսանքի միջոց կիրառելու մասին
- Մանկավարժական խորհուրդը որոշումներ է ընդունել հաստատության ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամաքանակի բաշխման մասին և այն ներկայացրել է տնօրենին՝ հաստատման:
Հաստատությունում գործում են երկու մեթոդական միավորումներ՝ «Հումանիտար» և «Բնագիտական», որոնցից յուրաքանչյուրի աշխատանքը կազմակերպվում է տվյալ մեթոդմիավորման նախագահի և անդամների համագործակցությամբ: Վերլուծելով նիստերի գումարման հաճախականությունը և քանակը վերջին 5 տարիների ընթացքում, կարելի է նշել որ ամեն մեթոդմիավորում միջին հաշվարկով գումարում է տարեկան 9 նիստեր : Մեթոդ միավորումների աշխատանքները կազմակերպվում են մեթոդմիավորման նախագահի տարեկան աշխատանքային պլանով, որը ուսումնական տարվա սկզբին հավանության է արժանանում մանկավարժական խորհրդի կողմից և գործածության մեջ է դրվում հաստատության տնօրենի հերթական հրամանով: Հաստատությունում կիսամյակային պարբերականությամբ կատարվում է մեթոդական միավորումների կողմից կազմակերպված աշխատանքների հաշվետվողականություն: Մեթոդական միավորումների աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալը: Գումարված նիստերն արձանագրվում են մեթոդական միավորումների կարտուղարների կողմից:

Հաստատության մեթոդական միավորումների գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Քննարկել է մանկավարժական խորհրդի կողմից փորձաքննության ներկայացված մեթոդական միավորման կազմում

ընդգրկված ուսումնական առարկաների հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին տվել երաշխավորություններ

- Քննարկել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը
- Նպաստել է ուսուցիչների (դասվաների) մասնագիտական և դասավանդման որակի բարձրացմանը
- Կազմակերպել է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ, մակավարժական-մեթոդական ընթերցումներ
- Մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացրել ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ առաջարկություն
- Կազմակերպել է դպրոցական առարկայական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

Հաստատության **ծնողական խորհրդի** աշխատանքները կազմակերպվում են ծնողական ժողովների միջոցով՝ համաձայն դպրոցի ուսումնադաստիարակչական տարեկան պլանի, հրավիրվում են դասարանական ժողովներ՝ առնվազն չորս անգամ, : Գումարված նիստերի արդյունքում կայացրած որոշումները կատարվում են ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ հաշվի առնելով աշխատողի պաշտոնային պարտականությունները և աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատանքի ուղղությունները: Ծնողական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը: Գումարված նիստերն արձանագրվում են ծնողական խորհրդի քարտուղարի կողմից:

Հաստատության ծնողական խորհրդի գործունեությունը հիմնականում կազմակերպվել է հետևյալ աշխատանքների միջոցով.

- Դպրոցի խորհրդի ձևավորման կարգի պահանջներին համապատասխան՝ իր կազմից առաջադրել է խորհրդի անդամության թեկնածուների: Գրանցված թեկնածուներից ընտրված են համարվում փակ քվեարկությամբ առավել ձայներ հավաքած երկու թեկնածուներ
- Դպրոցի տնօրենի կամ մանկավարժական խորհրդի քննարկմանն է ներկայացրել սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքի բարելավման, մանկավարժների խրախուսման, իրենց պատասխանատվությունների կատարման գործում թերացող մանկավարժներին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջարկություններ
- Աջակցել է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների կազմակերպման գործում
- Լսել է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին և ստացել ծնողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները
- Ծնողներին ներգրավվել է սովորողների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներում

➤ Աջակցել է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը:

Աղյուսակ 7

Դպրոցի ծնողական խորհուրդ

| Հ/Հ | Ծնողական խորհրդի անդամի անունը, ազգանունը | Որ դասարանի կողմից է առաջադրվել | Պաշտոնը |
|-----|---|---------------------------------|-----------|
| 1 | Արաքսյա Բաբայան | I | Անդամ |
| 2 | Հրանուշ Հովհաննիսյան | I | Անդամ |
| 3 | Սոնա Հակոբյան | I | Անդամ |
| 4 | Ալլա Ղազարյան | II | Անդամ |
| 5 | Էլյա Աշուղաթոյան | II | Անդամ |
| 6 | Նարինե Քոչարյան | II | Անդամ |
| 7 | Արև Ավդալյան | III | Անդամ |
| 8 | Անուշ Բաղրամյան | III | Անդամ |
| 9 | Նելլի Նազարյան | III | Անդամ |
| 10 | Սիրանուշ Հովհաննիսյան | IV | Անդամ |
| 11 | Զարուհի Պապանյան | IV | Անդամ |
| 12 | Աննա Աբրահամյան | IV | Անդամ |
| 13 | Մարիամ Փահլևանյան | V | Նախագահ |
| 14 | Սուսաննա Սիմոնյան | V | Անդամ |
| 15 | Կարինե Գաբրիելյան | V | Անդամ |
| 16 | Մելինե Պապոյան | VI | Քարտուղար |
| 17 | Սյուզի Ղազարյան | VI | Անդամ |
| 18 | Հերմինե Ոսկանյան | VI | Անդամ |
| 19 | Նարինե Ծատուրյան | VII | Անդամ |
| 20 | Անահիտ Գասպարյան | VII | Անդամ |
| 21 | Ալլա Ղազոյան | VII | Անդամ |
| 22 | Անուշ Բաղրամյան | VIII | Անդամ |
| 23 | Մելինե Պապոյան | VIII | Անդամ |
| 24 | Կարինե Պապոյան | VIII | Անդամ |
| 25 | Կարինե Մկոյան | IX | Անդամ |

| | | | |
|----|-------------------|-----|-------|
| 26 | Այլա Սարգսյան | IX | Անդամ |
| 27 | Նարինե Ծատուրյան | IX | Անդամ |
| 28 | Մարիամ Խաչատրյան | X | Անդամ |
| 29 | Արփինե Մինասյան | X | Անդամ |
| 30 | Հեղինե Ամիրբեկյան | X | Անդամ |
| 31 | Անուշ Ազատյան | XI | Անդամ |
| 32 | Էլիզա Տադոյան | XI | Անդամ |
| 33 | Կարինե Գաբրիելյան | XI | Անդամ |
| 34 | Անուշ Ազատյան | XII | Անդամ |
| 35 | Մարիամ Խաչատրյան | XII | Անդամ |
| 36 | Անահիտ Սարգսյան | XII | Անդամ |

Դպրոցի **աշակերտական խորհրդի** աշխատանքները ևս կազմակերպվում են նիստերի միջոցով: Այն սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմինն աշակերտական խորհուրդն է, որն ստեղծվում է ժողովրդավարության և ինքնավարության սկզբունքներին համապատասխան: Խորհուրդը միջին հաշվարկով գումարում է տարեկան 2-4 նիստեր՝ խորհրդի աշխատանքային պլանին համապատասխան: Աշակերտական խորհրդի աշխատանքը վերահսկում է հաստատության տնօրենի տեղակալը և սովորողների դաստիարակչական աշխատանքների համակարգողը: Գումարված նիստերն արձանագրվում են ծնողական խորհրդի քարտուղարի միջոցով.

- Աջակցել է դպրոցին՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներին ներգրավվելու գործընթացում
- Լսել է տնօրենի հաղորդումը դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի մասին և ստացել սովորողներին հետաքրքրող հարցերի պարզաբանումները
- Աջակցել է արձակուրդների ժամանակ սովորողների հանգստի և ժամանցի կազմակերպմանը Ստորն ներկայացված են «Մեծ Պարնու ակ. Մ. Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման և խորհրդակցական մարմինների գործունեության ուժեղ և թուլ կողմերը:

Ուժեղ կողմեր.

1. Կոլեգիալ կառավարման մարմնի բարեխիղճ աշխատանք
2. Խորհրդակցական մարմինների աշխատանք՝ համապատասխան հաստատության ուսումնադաստիարակչական աշխատանքների տարեկան պլան
3. Խորհրդակցական մարմինների ներգրավվածություն հաստատության արտադասարանական, արտադպրոցական աշխատանքներում և սովորողների հանգստի ու ժամանցի կազմակերպման գործընթացում:

Թույլ կողմեր.

1. Կոլեգիալ կառավարման մարմին-համայնք, խորհրդակցական մարմիններ-համայնք պասիվ համագործակցություն
2. Խորհրդակցական մարմինների աշխատանքում նախաձեռնողականության պակաս
3. Խորհրդակցական մարմիններ-դոնոր կազմակերպություններ համագործակցության բացակայություն:

Աղյուսակ 8

Դպրոցի աշակերտական խորհուրդ

| Հ/Հ | Ազգանուն, անուն | Դասարան | Պաշտոնը |
|-----|--------------------|---------|-----------|
| 1 | Պապանյան Արմինե | V | Անդամ |
| 2 | Ղազարյան Ռուզաննա | V | Անդամ |
| 3 | Ավետիսյան Ռոստոմ | V | Անդամ |
| 4 | Արզումանյան Յանա | VI | Անդամ |
| 5 | Գասոյան Սամվել | VI | Անդամ |
| 6 | Շահբազյան Էմմա | VI | Անդամ |
| 7 | Հալաջյան Ռոմա | VII | Անդամ |
| 8 | Գաբրիելյան Ալիկ | VII | Քարտուղար |
| 9 | Գասպարյան Ալվարդ | VII | Անդամ |
| 10 | Ավալյան Ռուստամ | VIII | Անդամ |
| 11 | Ավդալյան Անդրանիկ | VIII | Անդամ |
| 12 | Ուսոյան Անգելինա | VIII | Անդամ |
| 13 | Մկրտչյան Նարեկ | IX | Անդամ |
| 14 | Բարսեղյան Ռաֆիկ | IX | Անդամ |
| 15 | Գևորգյան Նարե | IX | Անդամ |
| 16 | Քոսյան Անի | X | Անդամ |
| 17 | Բադալյան Սիլվա | X | Անդամ |
| 18 | Պալյան Մերի | X | Անդամ |
| 19 | Գասոյան Արտյոմ | XI | Անդամ |
| 20 | Բարսեղյան Ռուզաննա | XI | Անդամ |
| 21 | Աշուղաթոյան Ժենյա | XI | Անդամ |

| | | | |
|----|--------------------|-----|---------|
| 22 | Արգումանյան Գայանե | XII | Նախագահ |
| 23 | Գաբրիելյան Արթուր | XII | Անդամ |
| 24 | Փիլոյան Մերի | XII | Անդամ |

2.4. Հաստատության կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության վերլուծությունը

Կառավարման խորհրդի և հաստատության տնօրենի համագործակցությունը վճռորոշ է արդյունավետ կառավարման և հաջող գործունեության համար: Այս համագործակցությունը երաշխավորում է, որ հաստատությունն առաջնորդվի ընդհանուր տեսլականով, ռազմավարական ուղղորդմամբ և ուժեղ առաջնորդությամբ:

Ստորև ներկայացված են «Լոռու մարզի Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի կառավարման մարմնի և տնօրենի համագործակցության ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր

1. Հաշվետվություն և վերահսկողություն. Կառավարման մարմինն ապահովում է վերահսկողություն և պատասխանատվություն է կրում տնօրենին դպրոցի արդյունավետ կառավարման համար՝ ապահովելով քաղաքականության և կանոնակարգերի հավատարմությունը:
2. Ռազմավարական որոշումների կայացում. Կառավարման մարմնի և տնօրենի համագործակցությունը թույլ է տալիս ռազմավարական որոշումներ կայացնել, որոնք համահունչ են դպրոցի տեսլականին, առաքելությանը և կրթական նպատակներին:
3. Ռեսուրսների բաշխում. Միասին աշխատելով՝ ղեկավար մարմինը և տնօրենը որոշումներ են կայացնում ռեսուրսների բաշխման վերաբերյալ, ապահովելով միջոցների օպտիմալ օգտագործում և աջակցություն կրթական ծրագրերին:

Թույլ կողմեր

1. Համատեղ տեսլական և նպատակներ. Կառավարման մարմինը և տնօրենը ունեն տարբեր տեսլական և ընդհանուր նպատակներ դպրոցի համար
2. Հաղորդակցություն և տեղակատվության փոխանակում. Կառավարման մարմնի և տնօրենի միջև անբավարար հաղորդակցություն հանգեցնում է թյուրիմացությունների, որոշումների կայացման հետաձգման, գործողությունների սխալ դասակարգման:
3. Ուժի դինամիկա. Հարաբերությունների ներսում առկա ուժային դինամիկան խանգարում է արդյունավետ համագործակցությանը: Վստահության պակասն ու ուժերի անհավասարակշռումն հանգեցնում է որոշումների կայացման գործընթացներում օպտիմալության բացակայության:

4. Հակառակ հեռանկարներ. Կառավարման մարմնի և տնօրենի միջև հեռանկարների, առաջնահերթությունների և մոտեցումների տարբերությունները հանգեցնում են մարտահրավերների՝ համագործակցության համար ընդհանուր հիմքեր գտնելու հարցում:

Դպրոցի կառավարման մարմնի և տնօրենի միջև համագործակցությունն ամրապնդելու նպատակով կարելի է ձեռնարկել հետևյալ քայլերը.

- Արդյունավետ հաղորդակցություն. Ստեղծել հաղորդակցության հստակ ուղիներ, խթանել կանոնավոր հանդիպումները և ապահովել թափանցիկություն կառավարման մարմնի և տնօրենի միջև տեղեկատվության և թարմացումների փոխանակման հարցում
- Համատեղ որոշումների կայացում. Խթանել համատեղ որոշումների կայացման գործընթացը, որը ներառում է երկխոսության և փոխհամաձայնության մթնոլորտի ձևավորմանը:
- Ուսուցում և մասնագիտական զարգացում. Կազմակերպել վերապատրաստման և մասնագիտական զարգացման հնարավորություններ ինչպես կառավարման մարմնին, այնպես էլ տնօրենին՝ նրանց դերերի, պարտականությունների և արդյունավետ համագործակցության վերաբերյալ նրանց փոխըմբռնումը բարձրացնելու համար:

2.5. Հաստատության համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների շահառու կազմակերպությունների հետ.

Դպրոցի և տարբեր շահագրգիռ կողմերի, այդ թվում՝ տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների շահառու կազմակերպությունների միջև համագործակցությունը կենսական դեր է խաղում աջակցող և հարստացնող կրթական միջավայր ստեղծելու գործում:

Ստորև ներկայացված են «Մեծ Պարնու ակադեմիկոս Միեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի և տեղական ինքնակառավարման մարմինների, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների շահառու կազմակերպությունների հետ համագործակցության ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր

1. Համայնքի ներգրավվածություն. Ծնողական համայնքի հետ համագործակցությունը խթանում է ակտիվ ներգրավվածությունը, մասնակցությունը և համատեղ պատասխանատվությունը սովորողների կրթության և բարեկեցության համար՝ ստեղծելով համայնքի ավելի ուժեղ զգացում դպրոցում:
2. Փորձաքննություն և ուղղորդում. Կրթության կառավարման մարմինների շահառու կազմակերպությունների հետ համագործակցությունը կարող է արժեքավոր փորձաքննություն, ուղեցույց և լավագույն պրակտիկա բերել կրթական պրակտիկան և քաղաքականությունը բարելավելու համար:

Թույլ կողմեր

1. Ռեսուրսների փոխանակման և աջակցության բացակայություն. Տեղական ինքնակառավարման մարմինների, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ ոչ համակողմանի համագործակցությունը խափանում է լրացուցիչ ռեսուրսների, ֆինանսավորման, փորձաքննության և դպրոցի ծրագրերի և նախաձեռնությունների համար աջակցությունը:
2. Հաղորդակցման մարտահրավերներ. Դպրոցի և շահագրգիռ կողմերի միջև հաղորդակցության սահմանափակության կամ բացակայության պատճառով խաթարվում է հաստատության նպատային գործունեությունը:

Շահագրգիռ կողմերի հետ համագործակցությունն ամրապնդելու համար կարևոր է հաշվի առնել հետևյալ քայլերը.

- Բաց և թափանցիկ հաղորդակցություն. Ջարգացնել հստակ և թափանցիկ հաղորդակցման ուղիներ՝ ապահովելու տեղեկատվության արդյունավետ փոխանակում, ժամանակին թարմացումներ և ակտիվ ներգրավվածություն շահագրգիռ կողմերի հետ
- Համատեղ որոշումների կայացում. Ներգրավել շահագրգիռ կողմերին որոշումների կայացման գործընթացներում՝ թույլ տալով նրանց ներդրումը, հեռանկարները և ակտիվ մասնակցությունը քաղաքականությունների, ծրագրերի և նախաձեռնությունների ձևավորմանը

2.6. Մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ներկայացումը.

Դպրոցի մանկավարժական անձնակազմի մասնագիտական որակները վճռորոշ դեր են խաղում դրական ուսումնական միջավայրի ստեղծման և սովորողների ակադեմիական և անհատական զարգացման գործում:

Ստորև ներկայացված են «Մեծ Պարնու ակադեմիկոս Միեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի մանկավարժական համակազմի մասնագիտական որակների ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր

1. Անհրաժեշտ որակավորում, աշխատանքային փորձ ունեցող և իրենց աշխատանքին նվիրված բարձրորակ մանկավարժ-մասնագետներ, ստեղծագործ ուսուցիչներ, ինչը նրանց հնարավորություն է տալիս կազմակերպել ուսումնադաստիարակչական գործընթաց և ուղղորդել սովորողներին
2. Մանկավարժական կարողունակություններ. Ուսուցիչները հիմնականում կարողանում են իրականացնել դասերի պլանավորում, ուսուցում, դասարանի կառավարում և ուսումնառության գնահատում.
3. Տարբերակված ուսուցում. Ուսուցիչները կարողանում են բավարարել սովորողների ուսուցման բազմազան կարիքները՝ հարմարեցնելով նրանց ուսուցման մեթոդներն ու նյութերը՝ անհատական ուժեղ կողմերին, հետաքրքրություններին
4. Դասարանի կառավարում. Մանկավարժական անձնակազմը արդյունավետորեն կառավարում է դասարանի միջավայրը՝

ստեղծելով դրական, ներառական և կարգապահ մթնոլորտ:


Թույլ կողմեր

1. Մահմանափակ մշակութային իրավասություն. Ուսուցիչները կարող են չունենալ բավարար մշակութային իրավասություն՝ անդրադառնալով սովորողների տարբեր մշակութային ծագմանը և փորձին, ինչը կարող է հանգեցնել ներառական և մշակութային արձագանքող ուսումնական միջավայրեր ստեղծելու հնարավոր մարտահրավերների
2. Տեխնոլոգիաների ինտեգրում. Որոշ ուսուցիչներ սահմանափակում են թվային գործիքների և ռեսուրսների օգտագործումը
3. Ուսումնառության գնահատում. Գնահատման պրակտիկաներում կարող են լինել անհամապատասխանություններ, ներառյալ ոչ նպատակային գնահատման ռազմավարությունների կիրառումը:

Թույլ կողմերը զարգացնելու և մանկավարժական անձնակազմի մասնագիտական որակների բարձրացնելու համար ձեռնարկվել է հետևյալ քայլերը.

- Մասնագիտական զարգացման հնարավորություններ. Տրամադրել շարունակական մասնագիտական զարգացման հնարավորություններ մանկավարժների մասնագիտական կարիքների գնահատման արդյունքով պայմանավորված
- Խորհրդատվություն և գործընկերների աջակցություն. Խթանել մանկավարժական խորհրդատվական ծրագրերի ներդրմանը, գործընկերների միջև համագործակցությանը
- Հետադարձ կապ և գնահատում. Ստեղծել կառուցողական հետադարձ կապի և գնահատման համակարգ՝ բարելավման ոլորտները բացահայտելու և ուսուցիչներին նպատակային աջակցություն ցուցաբերելու համար
- Տեխնոլոգիաների ինտեգրման աջակցություն. Նախաձեռնել վերապատրաստումներ և ապահովվել ռեսուրսներ՝ ուսուցիչներին աջակցելու համար տեխնոլոգիան արդյունավետորեն ներմուծելու ուսումնադաստիարակչական գործընթացում:

Գծապատկեր 9



2.7. Օգտագործվող SՀS և կրթական տեխնոլոգիաների և նորարարությունների ներկայացումը.

Ժամանակակից դպրոցն անհնար է պատկերացնել առանց SՀS կիրառության: Դրանք յուրաքանչյուր օր օգտագործում են թե՛ դպրոցի տնօրինությունը, թե՛ ուսուցիչները, թե՛ աշակերտները և նրանց ծնողները: Կիրառվում են էլեկտրոնային դասամատյաններ և օրագրեր, դպրոցում կիրառվող մատենագրությունը աստիճանաբար թղթայինից անցում է կատարում էլեկտրոնայինի: Կրթական նոր տեխնոլոգիաների զարգացումն էլ ավելի է խթանում դասավանդման նոր մեթոդների, ուսուցման նոր ձևերի մշակումը: Այսօր արդեն նորություն չեն դասավանդման փոխներգործուն, աշակերտակենտրոն մեթոդները, ուսուցման կազմակերպման տարբեր եղանակները, հեռավար ուսուցման ձևերը: Դպրոցում այսպիսի նորարարական տեխնոլոգիաների կիրառումը պահանջում է ժամանակ և միջոցներ: Հնարավոր չէ մեկ սեմինարի կամ վերապատրաստման դասընթացի միջոցով բոլոր ուսուցիչների մոտ ձևավորել ուսուցման ժամանակակից մեթոդների արդյունավետ կիրառման կարողություններ: Դպրոցի վարչական կազմն էլ պետք է կարողանա ուսուցչի աշխատանքը վերահսկել, անհրաժեշտ օժանդակություն ցույց տալ և ապահովել նոր ստացած գիտելիքների և հմտությունների կիրառումը: Ցանկալի է, որ յուրաքանչյուր դպրոց, ըստ իր զարգացման ուղղվածության առաջնահերթությունների, ներդնի գիտականորեն հիմնված որևէ նոր, զարգացում ապահովող, գիտամանկավարժական նորարարություն: Սա հնարավորություն կտա հիմնադրին գնահատելու դպրոցի ջանքերը գիտական տեսանկյունից՝ դրանով դպրոցը առանձնացնելով մյուսներից, օգտագործելով, տարածելով հաջողված փորձի արդյունքները:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների ու այլ կրթական տեխնոլոգիաների և նորարարությունների ներդրումն փոխակերպել են կրթության հնարավորությունները՝ բարելավելով ուսումնառության արդյունավետությունը:

Ստորև ներկայացված են «Մեծ Պարնու ակադեմիկոս Մհեր Մելքոնյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի SՀS և կրթական այլ տեխնոլոգիաների և նորարարությունների ուժեղ և թույլ կողմերը:

Ուժեղ կողմեր

1. SՀS ռեսուրսների միջոցով անհատականացված ուսուցում, անհատականացված ուսուցման հարթակները հարմարեցնում են ուսուցումը՝ հիմնելով առանձին սովորողների կարողությունների, հետաքրքրությունների և ուսուցման ոճերի վրա՝ աջակցելով անձակենտրոն ուսուցմանը
2. Համագործակցություն և հաղորդակցություն SՀS-ի միջոցով. SՀS գործիքները նպաստում են սովորողների և ուսուցիչների միջև համագործակցությանը, ինչը հնարավորություն է տալիս իրական ժամանակում հաղորդակցությանը
3. Բովանդակության մատուցման հարստացում SՀS-ի միջոցով. Կրթական տեխնոլոգիաներն առաջարկում են մուլտիմեդիա հնարավորություններ՝ ուսուցիչներին հնարավորություն տալով բովանդակություն մատուցել տեսանյութերի, ինտերակտիվ ներկայացումների և վիրտուալ ցուցադրությունների միջոցով

Թույլ կողմերը

1. Համընդհանուր ռազմավարական տեխնոլոգիաների կիրառման բացակայություն. Կառավարման, ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական աշխատանքները կազմակերպվում են գործողությունների մակարդակով, ներդրված չեն ռազմավարական տեխնոլոգիաներ, կառավարման համակարգեր
2. ՏՀՏ-ի կիրառման սակավություն. Կառավարման, ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական աշխատանքները հաստատությունում կազմակերպվում են օգտագործելով որոշ ՏՀՏ ռեսուրսներ, որոնց որակը և նպատակայնությունը գնահատված չեն
3. Ենթակառուցվածքային և տեխնիկական խնդիրներ. Անբավարար ենթակառուցվածքը, սահմանափակ համացանցային հասանելիությունը կամ տեխնիկական դժվարությունները խոչընդոտում են դպրոցում ՏՀՏ և կրթական տեխնոլոգիաների անխափան ինտեգրմանը և կիրառմանը
4. Ֆինանսական ներդրում և կայունություն. Կրթական տեխնոլոգիաների ներդրումը և պահպանումը ծախսատար է և պահանջում է ծրագրային ապահովման լիցենզիաներում և շարունակական թարմացումներում, ինչը ֆինանսական մարտահրավերներ է ստեղծում դպրոցի համար:

Թույլ կողմերը զարգացնելու և ՏՀՏ և կրթական տեխնոլոգիաների ներուժը առավելագույնի հասցնելու համար դպրոցը կարող է ձեռնարկել հետորյալ քայլերը.

- Ֆինանսական միջոցների արդյունավետ կառավարում, մոտիվացնել, խրախուսել ուսուցիչներին
- Հաստատության կառավարման, ուսումնադաստիարակչական և վարչատնտեսական աշխատակիցներին ներգրավվել համակողմանի կարողություններ զարգացնող վերապատրաստումներում և տալ շարունակական աջակցություն՝ արդյունավետորեն ինտեգրելու և օգտագործելու ռազմավարական տեխնոլոգիաները իրենց գործունեության մեջ
- Ապահովել , որ դպրոցն ունենա անխափան , հուսալի ինտերնետ կապ, համապատասխան ծրագրային ապահովում և տեխնիկական աջակցություն՝ ցանկացած տեխնիկական խնդիր անհապաղ լուծելու նպատակով
